ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ - ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Է. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՋԱՆՖԻԴԱՅԻ Է. ԴԱՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ

ՄԵՆԹՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան----------3-4-------էջ

2.Գրական ակնարկ----------4-9-------էջ

3.Գործնական համատեքստ----------10--14----էջ

4.Ամփոփում----------15----16---------- էջ

5.Գրականության ցանկ----------16-----17էջ

6.Հավելված ----------18 -23 էջ

ՆԱԽԱԲԱՆ

Կրթությունը շատ հզոր զենք է , որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար:

Նելսոն Մանդելա

Յուրաքանչյուր հասարակության զարգացման գլխավոր պայմանը կրթությունն է և կրթական համակարգը, որոնց հիմքը դրվում է դպրոցում :Կրթական համակարգի արդի խնդիրը ոչ միայն գիտելիքի մեծ պաշարով զինելն է, այլև պատրաստել հասարակության համար պիտանի, կարողունակ , կայուն արժեհամակարգ ունեցող քաղաքացի: Այսպիսի քաղաքացիներն են ձևավորում բարեկեցիկ հասարակություն և ամուր հայրենիք:

Գրականությունը հանրակրթության ոլորտի այն կարևորագույն առարկաներից է, որի դաստիարակիչ ազդեցությունը դպրոցականի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորման գործում հսկայական է:Կարելի է ասել, այդ գործի առյուծի բաժինն ընկնում է գրականությանը: Սակայն ժամանակակից տեղեկատվական համակարգերի դարում ընթերցանությունը մղվել է երկրորդ պլան : Ուսուցչից հսկայական ջանքեր են պահանջ-վում ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու համար :Այս խնդրում մեծ դեր ունի միջառարկայական կապերի կիրառումը:Հատկապես արվեստ- գրականություն միջ-առարկայական կապի օգտագործումը կնպաստի մատուցվող նյութի խորքային իմա-գությանը, նաև ուսուցման գործընթացի հետաքրքիր կազմակերպմանը,իսկ հետա-քրքրության խթնումը դասի հաջողվածության գրավականներից մեկն է: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտներն սկսում են ընթերցել,երբ կարողանում են վերլուծել և հասու լինել տեքստի ենթաշերտերին:Իսկ ստեղծագործության լիարժեք բացահայտմանը նը-պաստում են միջառարկայական կապերը և հատկապես խաչվող հասկացությունները : Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել նյութի շուրջ եղած մեթոդական գրականությունը և ելնելով նաև սեփական փորձից՝ առաջարկել այն մեթոդներն ու հնարները, որոնք կնպաստեն գրական ստեղծագործության առավել լիարժեք բացահայտմանն ու ընկալմանը, աշակերտների մոտ կձևավորեն քննադատական մտածողություն և ստեղծագործական կարողություններ, կնպաստեն գեղագիտական դաստիարակության ձևավորմանն ու զարգացմանը:

Հետազոտության խնդիրներն են.
1.ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնական մեթոդական գրականությունը,
2.մատնանշել արվեստի տարբեր ճյուղերի անմիջական կապը գրական երկի հետ և ազդեցությունը աշակերտի գեղագիտական դաստիարակության և ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում,
3. հիմնավորել միջին դպրոցի աշակերտի անհատականության ձևավորման գործում արվեստի և գրականության բացառիկ դերը:
4.Խաչվող հասկացությունների կիրառմամբ նպաստել աշակերտների քննադատական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը :
Հետազոտության առարկան 7-րդ դասրանի գրականության դասընթացն է՝միջառարկայական կապերի և խաչվող հասկացությունների կիրառմամբ :
Հետազոտվող նյութը՝ Դ. Դեմիրճյանի <<Ավելորդը>> պատմվածքի ուսուցումը:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արվեստագետի կոչումն է լույսով ողողել մարդկային հոգու խորքերը:

Շուման

Դասի ներդաշնակությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի՝ դասին լավ պատրաստված լինելով, այլև սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած մոտիվացմամբ:Իսկ երեխային ակտիվ ուսումնառության մեջ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների հետաքրքրություններից և նախասիրություններից բխող ուսումնական պրոցեսի կազմակերպումն է:Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:Միջառարկայական կապերը պետք է նպաստեն գրական ստեղծագործության լիարժեք բացահայտմանը:
Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր <<Մեծ դիդակտիկա>>

աշխատության մեջ նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցմամբ ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը:Միջառարկայական կապերը ,արտացոլելով շրջակա աշխարհի երևույթների և գործընթացների փոխկապակցվածությունը, էական դեր են խաղում սովորողների մոտ համակարգային մտածողության զարգացման և ընդհանուր ուսումնական կարողությունների ձևավորման գործընթացում:Իսկ այդ կարողութ-յունների ու հմտությունների զարգացման գործում մեծ դեր ունի գրականությունը: Արձակ և չափածո ստեղծագործագործությունների վերլուծությունը նպաստում է ոչ միայն կարողությունների ու հմտությունների, այլև դեռահասների նուրբ ու զգայուն հոգեկերտվածքի ձևավորմանը:Իսկ գրական երկի վերլուծությունն ինքնին արվեստ է: Առաջին հերթին այն պետք է ունենա հուզական ներգործություն, հետաքրքրության դրսևորում, ճանաչողական դեր: Ուսուցչի դասավանդման ընթացքը, մատուցումը պետք է հասնի այն բանին, որ ուսուցանվող երկը համապատասխան արձագանք գտնի աշակերտների սրտերում:Միջառարկայական կապեր կարող ենք ստեղծել տարբեր առարկաների հետ, բայց քանի որ գրականությունը խոսքի արվեստ է, այն իր շրջանակներում կապվում է արվեստի տարբեր տեսակների հետ՝ թատրոն, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն: 1.Իրականության արտացոլման իմաստով էական ընդհանրություններ կան գրականության և թատրոնի միջև:<<Աշակերտ-ընթերցողը գրական ստեղծագործությունը կարդալիս իր երևակայական դաշտում ինքնատիպ գունավորմամբ ստեղծում է գրողի կերտած աշխարհը;Իսկ նույն ընթերցողը հանդիսատեսի կարգավիճակում այլևս այդ երևակայական աշխարհի կրողը չէ:Նրա առջև այդ եզերքը իրականություն է դառնում թատրոնի լեզվով, թատերական աշխարհի խորհրդավոր արտահայտչամիջոցներով, գունային, ձայնային ելևէջումներով:Երբեմն բեմադրիչի աշխատանքի շատ նրբություններ առավել խորությամբ են ցույց տալիս հեղինակային հարցադրումները, և դերասանական բարձրարվեստ խաղը օգնում է

հասկանալու հոգեբանական բարդ անցումները:Մտապատկերը դառնում է իրական և հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն վերլուծելու և հասկանալու երկը>>[1]:

Սունդուկյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի ,Վ. Սարոյանի գեղարվեստական ստեղծագործությունների հիման վրա նկարահանված կամ բեմադրված ֆիլմերն ու ներկայացումները ասվածի համար անսպառ նյութ են տալիս:Սակայն ավելի հետաքրքիր է դառնում դասը, երբ աշակերտն ինքն է դեր խաղում: Նար-Դոսի նովելներն ուսումնասիրելիս կարելի է հանձնարարել տեղեկություններ դուրս բերել մնջախաղի մասին և դերային խաղով ներկայացնել որևէ նովելի հերոսի: Դերային խաղը ոգևորությամբ է ընդունվում 5-6-րդ դասարանների աշակերտների կողմից:Կրտսեր դպրոցականներն ավելի արագ են ընկալում նյութը ,երբ իրենց զգում են այդ հերոսի դերում:Հատկապես երբ իրենք են ընտրում, թե հեքիաթի որ հերոսի դերը տանեն:Կարծում եմ՝ սա նպաստում է ոչ միայն երկի ընկալմանը, այլև ստեղծագործական կարողությունների, միմյանց նկատմամբ հանդուրժողականության և համագործակցային կարողությունների ու հմտությունների ձևավորմանը: 2.Հետաքրքիր միջառարկայական կապեր կարելի է ստեղծել գրականություն-նկարչություն զուգահեռներում: Հաճախ գրական երկն ու կտավը, գունային պատկերներով, մտածողության ոլորտներով հարազատանում են:Նման դեպքում զուգահեռ վերլուծությունը կօգնի երեխայի և՛պատկերավոր մտածողության զարգացմանը, և՛ գեղագիտական ընկալումների ամրակայմանը, և՛ մտահորիզոնի ընդլայնմանը: <<Նկարիչը բանաստեղծի նման կյանքի և բնության մեջ գտնում է հետաքրքիր ակնարկներ, որոնք նրա մեջ հուզական արձագանք են արթնացնում , և իր այդ զգացումը հաղորդում է կտավին:Բանաստեղծական պատկերում իշխում է բառը, որը ծնվում է բանաստեղծական մտքի թռիչքից, կտավի վրա իշխում է գույնը, որը ծնվում է ճիշտ վրձնախաղերից>>:[2] Իսկ երբ այս ամենին ի լրումն լսվում է մոգական երաժշտությունը, պատկերն ավելի զգացական ու ամբողջական է դառնում:

---

[1] 1-Ա. Արզումանյան, Արվեստ. Գրականություն,Հայոց լեզու և գրականություն, թիվ 1-2, էջ 83:

[2] նույնը, էջ 84:

Երաժշտությունը սահմաններ չունի . այն հոգու արվեստ է,այն թափանցում է մարդկային հոգու խորքերը, քնքշացնում և տեսողական մտապատկերն ամբողջանում է ձայնի օգնությամբ: Օրինակ՝ 6-րդ դասարանում, երբ անցնում էի Վ. Դավթյանի<<Լիճը>> բանաստեղծությունը, լճի ջրերի մեղմ ծփանքին համահունչ էր Շոպենի երաժշտությունը: Այն կարծես ծնվել էր հենց լճի ջրից՝մեղմ, հոգեպարար, իսկ այդ երաժշտության ներքո ստեղծված լճի պատկերները՝ ճայերի թռիչքը, ալիքների վետվետումը, վերի և վարի լուրթ երկինքը ,ստեղծեցին լճի երևակայական պատկերը:Ուղղակի սքանչելի էր, աննկարագրելի էր երեխաների ոգևորությունը: 9-րդ դասարանում Գր. Նարեկացու <<Մեղեդի ծննդյան>> տաղն ուսուցանելիս ցուցադրում եմ Տիրամորը պատկերող Ռաֆայելի, Լ. դա Վինչիի, Տիցիանի, Վ. Սուրենյանցի և ալոց գործերը: Իսկ տաղի ընթերցանությունից հետո ունկնդրում ենք նաև Լ. Զաքարյանի կատարմամբ<<Սուրբ- սուրբ>> շարականը:Աշակերտները ակնածանքով էին դիտում այդ նկարները և ինքնատիպ ձևով բնութագրում Տիրամորը: Գրականությունը և՛ գիտություն է, և՛ արվեստ: Նրանից են սկիզբ առնում երգը, երաժշտությունը, կինոնկարը, թատրոնը, օպերան, բալետը, քանդակն ու նկարը:Վարդան Մամիկոնյանը կերպավորվում է Դ. Դեմիրճյանի<<Վարդանանքում>>, Ն. Շնորհալու<<Վարդանանց>> -ում երգն ուկնդրվում է, դիտվում Գ. Խանջյանի նկարում և Ե. Քոչարի քանդակում:Ե. Չարենցի <<Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծության բանալին է դառնում Ն. Վիրաբյանի պատրաստած բառ-նկարաշար գրքույկը, որն էլ խթանում է աշակերտներին նմանատիպ ձևով նկարազարդել Պ. Սևակի, Հ. Շիրազի և Հ. Սահյանի բանաստեղծությունները: Բանաստեղծության ունկնդրումն ավելի հաճելի է, երբ այն կատարում են աստունքի վարպետները՝ դասական երաժշտության ներքո: Արվեստ- գրականություն կապը դառնում է նյութի՝ գեղեցիկով միջնորդավորված յուրացումն ապահովելու հնար:

Առհասարակ մարդկանց և հատկապես աշակերտների հոգում միշտ արթուն է անսովորին ու գեղեցիկին ոչ միայն հափշտակված, զարմացած, այլև խորհելով դիտելու հակումը:Այս ձևով ընկալելուն, այն է՝աշակերտների քննադատական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստում են ընդհանրական

խաչվող հասկացությունները, որոնց դերը կարևորվել է հանրակրթության պետական նոր չափորոշչով :

<<Դրանք առանցքային հասկացություններ են, որոնք օգնելու են սովորողին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում>>:[3]

Առանձնացվում են խաչվող կամ ընդհանրական 8 հասկացություններ.

1.օրինաչափություն,
2. պատճառ և հետևանք
3. կառուցվածք և գործառույթ
4. կայունություն և փոփոխություն
5. անհատներ և հարաբերություններ
6. ժամանակ և տարածություն
7. փոփոխություն և զարգացում
8.անհատական և մշակութային արժեհամակարգ

Ստորև ներկայացնում ենք աղյուսակ, որն ավելի մատչելի կդարձնի խաչվող հասկացությունների ընկալումն ու յուրացումը:

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Հասկացությունը	Առանձնահատկություն-յունները	Նպատակը. Ինչ կարողունակություն-ներ է զարգացնում	Օրինակ
1.Օրինաչափություն	Կանոնավոր կառույցներում կրկնվող երևույթ;	Զարգացնում է վերլուծական մտածողությունը	Մեղվի փեթակը օրինաչափ կառուցվածք ունի:
2.Պատճառ և հետևանք	Առանց պատճառ չկա հետևանք և հետևանքը միշտ ունենում է պատճառ;	Զարգացնում է քննադատական մտածողությունը:	Մի կաթիլ մեղրը դարձավ պատերազմի պատճառ:

[3] ԿԶՆԱԿ, Խաչվող հասկ

3.Կառուցվածք և գործառույթ	Գործառույթը կարելի է բացատրել կառուցվածքով, իսկ կառուցվածքը՝ գործառությամբ:	Գիտելիքը կիրառել անծանոթ երևույթը բացատրելիս:	Նախադասության գծակարգը ավելի տեսանելի է դարձնում նրա գործառույթը:
4.Կայունություն և փոփոխություն	Երբ երևույթը կայուն է , բայց ենթակա է փոփոխության;	Կարողանալ բացատրել հետադարձ կապի մեխանիզմը;	Երկրի՝ Արեգակի շուրջը պտտվելու ց փոփոխվում են տարվա եղանակները:
5.Անհատներ և հարաբերություն-ներ	Անհատի դերակատարությունը պատմության զարգացման գործում	Սովորողը հասկանա, թե ո՛վ է ինքը,ինչ դեր ունի համայնքում և ովքեր են մենք-ը:	Ես-ը մենք-ի մի մասն է, բայց և անհատ է ու կարող է մեծ դեր ունենալ
6.Ժամանակ և տարածություն	Կարևորվում են որտե՞ղ և ե՞րբ հարցերը	Ժամանակի և տարածության ըմբռնում	Մարդկության պատմության կարևորագույն գյուտերից մեկը թուղթն է:
7.Անհատական և մշակութային արժեհամակարգ	Ստեղծարարության դերի ու նպատակի գիտակցում	Արժևորել մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունը, հարստացնել իր կյանքը	Արվեստը կարևոր առաքելություն ունի կյանքում;
8. Փոփոխություն և զարգացում	Երևույթները և կյանքը անընդհատ	Հասկանալ, որ մարդկային	Լուսնի փոփոխությունն

	փոփոխություն և զարգացում են ապրում	պատմության ընթացքում շատ դեպքեր կրկնվում են	ու փուլերը ամսվա ընթացքում;

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ <<ԱՎԵԼՈՐԴԸ>> ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

<< <<Ավելորդը>> խոշոր պատմվածքը եզակի է մեր գրականության մեջ՝ մշտարժեք: Զանազան անկյուններից կարելի է նայել այդ երկին և միշտ ընդունել այն գեղեցիկ ու կատարյալ: …Ինձ զարմացնում են հոգեբանական այն խորունկ, ճշմարիտ վերլուծումները, որ անում է հեղինակը խղճմտանքի անպարտելի ուժի, խղճի խայթերի և ներքին ահեղ ու արդար դատաստանի վերաբերմամբ: Սրանք համաշխարհային գրականությունը զարդարող էջեր են>>,- ասել է Ավետիք Իսահակյանը:

Մենք էլ փորձ արեցինք այս գեղեցիկ պատմվածքը ձեր դատին ներկայացնել միջառարկայական կապերի և խաչվող հասկացությունների օգնությամբ: Քանի որ այս պատմվածքը ուսումնասիրում են 7-րդ դասարանում , իսկ 7-րդ դասարանցիների մոտ դեռևս լավ չեն ձևավորվել քննադատական մտածողությունն ու ստեղծագործելու կարողությունը, փորձ արեցինք ցույց տալ խաչվող հասկացությունների դերը վերոնշյալ

կարողությունների ձևավորման ու զարգացման գործում: Փորձեցինք քայլ առ քայլ բացել մարդու ներաշխարհը, գտնել այն պատճառներն ու հետևանքները, որոնք դարձան մարդկային կյանքերի կործանման պատճառ և դասեր քաղել դրանցից: Առաջին դասաժամն սկսում եմ Սալվադոր Դալիի <<Մենություն>> նկարի վերատպության ցուցադրությամբ և առաջարկում կապ գտնել նկարի և պատմվածքի վերնագրի միջև :Կապն ակնհայտ էր: Հանձնարարեցի մտքերն արտահայտել 5-րոպեանոց շարադրանքով: Իսկ երբ պարզեցի, որ այս նկարիչն անծանոթ է, հանձնարարեցի աշակերտներից մեկին հաջորդ դասին հանդես գալ Ս.Դալիի մասին փոքրիկ զեկուցումով:

Պատմվածքն սկսեցինք ուղղորդված ընթերցանությամբ. դադարների պահին կանխագուշակումներ էին անում և պատասխանում հարցերի:

1.Ի՞նչ տպավորություն թողեցին ձեզ վրա պատմվածքի առաջին տողերը:

2.Պատմվածքը կարդալու ընթացքում առանձնացրու՛ կերպարները և բնութագիր նրանց:

3.Ըստ քեզ՝ ո՞րն է Հաճի աղայի անհանգստության հիմնական պատճառն այս հատվածում: Ուշադի՛ր եղիր՝ արդյոք հետագայում կփոխվի՞ այդ պատճառը:

4. Սրբունն ուզու՞մ էր հեռանալ քաղաքից: Ի՞նչ ես կարծում, նա ճի՞շտ վարվեց:

5. Ի՞նչ ես կարծում, հարազատները սիրու՞մ էին Սրբունին:

Դիպաշարին ծանոթանալուց հետո համատեղ ուժերով պատմվածքը բաժանում ենք մասերի, վերնագրում և կազմում պլան առաջին հատվածի համար: Կատարում ենք անդրադարձ նկարին. ո՞վ էր ավելորդը:Աշակերտները կատարում են ինքնագնահատում:
Հանձնարարում եմ տանը կազմել Հաճի աղայի ընտանեկան տոհմածառը: Գրել<<Փախուստ>> վերնագրով փոխադրություն՝ ըստ դասարանում կազմած պլանի:

Հաջորդ դասերի ընթացքում, խաչվող հասկացությունների օգնությամբ, կատարեցինք կառուցվածքի, կերպարների, գաղափարական և ոճական վերլուծություններ:Հաջորդ դասին աշակերտները բաժանվեցին խմբերի և <<Ֆրայերի մոդել>>մեթոդով ներկայացրին օրինաչափությունները:Առաջադրանքը 4 խմբերի համար նույնն էր. նույնն էին նաև հասկացությունն ու սահմանումը,իսկ օրինակը, հակաօրինակը և նկարը կամ գծագիրը՝ տարբեր:Այս առաջադրանքի կատարման միջոցով աշակերտները պարզեցին հերոսի՛ ծիսական արարողակարգի նմանվող ապրելակերպն ու դրա հակաօրինակը, որի օգնությանբ էլ պարզեցին նրա վարքի կայունությունն ու փոփոխությունը՝հոգեկան խռովքն ու անհանգստությունը, որը քիչ-քիչ զարգացում էր ապրում:Կայունությունն ու փոփոխությունը ցույց տալու համար օգտագործեցինք տեաձև աղյուսակ և համադրեցինք հոգեկան փոփոխությունը արտահայտող տողերը:Դասագրքի հեղինակները կարմիրով

էին ներկել այդ տողերը՝ ավելի ակնառու դարձնելով հոգեվիճակի հաջորդական փոփոխությունը:

Կայունություն	Փոփոխություն
Երբեք չեն ցեխոտվել տաբատի փողքերը: Քայլում էր հանդիսավոր, աքաղաղի պես:Ամեն առավոտ կաթով սուրճ էր խմում:	Հաճու շալվարի ցեխոտված տոտերը; Հաճին սուրճը չխմե՞ց…
Իր կյանքն ընթացել էր հանգիստ, առանց ցնցումների. Նա ստեղծել էր իր տունը, դիզել իր հարստությունը:	Թեկուզ և ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը՝ իր տունը,իսկ եթե չեղավ՝իր անձը:
Նա աստվածավախ մարդ էր և իր պատվի մասին մտածելով՝ խնամում էր իր անդամալույծ քրոջը, որն իր ուսերին էր վերցրել տան կարն ու կարկատանը:	Հաճին նայեց անդամալույծին, բայց չտեսավ նրան:Նա սենյակի իրերն էր ֆուրգոնի մեջ տեղավորում և որոնում էր ամենապետքական իրեր: Նմանատիպ այլ օրինակներ;

Մյուս դասն ամբողջությամբ նվիրեցինք կերպարների վերլուծությանը: Տեաձև աղյուսակի օգնությամբ համեմատեցինք և հակադրեցինք երկու կերպարները, ցույց տվեցինք դրական և բացասական հերոսներին:Կազմակերպեցինք դատավարություն և դատեցինք Հաճի աղային: Ապա փորձեցինք պարզել հեղինակի վերաբերմունքը նրանց նկատմամբ:Հանձնարարեցի դուրս բերել համեմատությունները: Հաճի աղային Դեմիրճյանը ,ըստ իրավիճակի, մերթ համեմատում էր աքաղաղի, մերթ վիզը ծուռ ուղտի, մերթ էլ թակարդն ընկած մկան ու աղվեսի հետ,իսկ Սրբունին նկարագրում է լուսավոր, հանդարտ, ներհուն:Նրա լացն անգամ, անհանգստությունը ոչ թե իր, այլ եղբոր համար էր: Ակնհայտ էր հեղինակի բացասական վերաբերմունքը Հաճի աղայի նկատմամբ,իսկՍրբունին՝ հակառակը: Ապացուցելու համար երեխաների եզրակացության ճշմարտացիությունը ընթերցում եմ , թե ինչ է գրել Դ. Դեմիրճյանը այս մասին. <<Գրելով <<Ավելորդը>>՝ ես գրում էի մարդկանց մասին: Հաճի աղան

վաճառական չէր, նա բուրժուազիայի ներկայացուցիչ չէր, այլ մարդ՝ իր բարոյական այլանդակությամբ և խղճի ձայներով: Սրբունը մարդ էր իր վեհությամբ>>: Այստեղ տեղին է հիշել Սրբունի նախատիպի՝Դեմիրճյանի՝Սրբուն անունով քրոջ մասին: Ցանկացած երկում առկա են պատճառահետևանքային կապեր,որոնց հիման վրա էլ զարգանում են դիպաշարային գործողությունները:Աշակերտներին հանձնարարեցի կշռադատման փուլում աշխատել << Ապագայի անիվ>> մեթոդով; <<Եթե պատերազմ չլիներ>> պայմանով կազմվեց ապագայի անիվը, որն էլ ցույց տվեց, որ ամեն ինչի պատճառը պատերազմն էր:Սակայն կատարյալ համարվում է այն մարդը, ով անգամ պատերազմի ժամանակ չի կորցնում մարդկային դեմքը:

Տանը հանձնարարեցի գրել շարադրություն՝<<Խիղճը>> վերնագրով:

Վերջին՝ ամփոփիչ դասի ժամանակ օգտագործեցի Էդվարդ դը Բոնոյի<<Վեց գլխարկներ>> մեթոդը: Մթնոլորտը գործնական էր. դասարանը բաժանվեց վեց խմբի և կատարեց տրված առաջադրանքները:
1.Սպիտակ գլխարկ՝ ներկայացնել պատմվածքի հիմնական գործողությունները:
2.Կարմիր՝ ներկայացնել պատմվածքում առկա հույզերը,զգացմունքները, տրամադրությունները՝ համապատասխան մեջբերումներով:
3.Դեղին՝ ներկայացնել պատմվածքի դրական, ուրախ կողմերը:
4. Սև՝ ներկայացնել պատմվածքում առկա վտանգները, բացասական երևույթները:
5. Կանաչ՝ պատմվածքի համար նոր ավարտ հորինել:
6. Կապույտ՝ ներկայացնել պատմվածքում շոշափված խնդիրները, հարցերը, բուն գաղափարները:
Առաջադրանքները կատարելուց, ներկայացնելուց և վերլուծելուց հետո ընթերցեցին պատմվածքի նոր ավարտը: Երեխաների ցանկությունը մեկն էր՝ տեսնել Սրբունին փրկված և առողջացած:

Անդրադարձ կատարելու համար ընթերցեցի Ավ. Իսահակյանի խոսքերը պատմվածքի մասին: Համաձա՞յն են արդյոք Ավ. Իսահակյանի հետ:Թող հիմնավորեն իրենց կարծիքը: Տանը հանձնարարեցի գրել մենախոսություն Հաճի աղայի կամ Սրբունի անունից:Իսկ

երեք օժտված աշակերտուհիներիս հանձնարարեցի հատուկ առաջադրանք: Պատկերացրո՛ւ, որ դու մարդու իրավունքների պաշտպան ես: Տեղեկություններ հավաքի՛ր Հայաստանում հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների մասին: Արդյոք նրանց իրավունքները պաշտպանվա՞ծ են: Ի՞նչ առաջարկներ ունես:

Դասի ավարտին կատարեցինք փոխադարձ և միավորային գնահատում: Հաջորդ դասին գրեցինք թեմատիկ թեստային գրավոր աշխատանք, որի արդյունքները ևս տրված են հավելվածում՝ քարտեզագրման միջոցով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Երբ համադրում ենք դասավանդած 4 դասերը,որոնց վերլուծության համար օգտագործել եմ ձևավորող և միավորային գնահատման տարբեր գործիքներ/հայտորոշիչ թեստ, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, ստեղծագործական հավելումներով փոխադրություն և շարադրություն, հաշվառել եմ ակտիվ և պասիվ աշակերտներին, քննադատական մտածողություն , ստեղծագործական երևակայություն ունեցող աշակերտներին:Համադրել եմ նախորդ և հաջորդ դասերը, որից երևում է աշակերտների թե՛ հետաքրքրության, թե՛ երևակայության և թե՛ վերլուծական կարողությունների ակնհայտ դինամիկան:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ միջառարկայական կապերի և խաչվող հասկացությունների միջոցով առարկան քննելիս հնարավորություն է ընձեռնվում նյութը ուսումնասիրել նոր ձևաչափով, համակողմանիորեն՝ գտնելով կապեր իրական կյանքի հետ:

Խաչվող հասկացությունները նպաստեցին աշակերտներին՝ բացահայտելու պատմվածքում առկա ենթատեքստերը,գրողի փիլիսոփայությանը հատուկ հետաքրքիր արտահայտությունները, որոնց հիման վրա կատարվեցին մի քանի եզրահանգումներ պատմվածքի վերաբերյալ:Նախ՝ պատմվածքը համարեցին արդիական ՝աղերսներ գտնելով գաղթի և այժմյան արցախահայության բռնի տեղահանության միջև: Պատմության ուսուցչի օգնությամբ պարզեցին, որ պատմվածքում կատարվող դեպքերը վերաբերում են 1877 թ. ռուս- թուրքական պատերազմին, մասնավորապես Արդահան քաղաքին, քանի որ, ըստ պատմական աղբյուրների, հենց Արդահան քաղաքն է գրավվել և նորից ետ վերցվել:Պարզեցին, որ պատմվածքի հերոսները խոսում են Կարնո բարբառով.չէ՞ որ Դեմիրճյանի ծնողները գաղթել էին Կարին քաղաքից: Հասկացան, որ մարդը մարդ է՝ լինի հաշմանդամ թե առողջ: Բոլորն էլ իրավունք ունեն ապրելու այս արևի տակ: Հասկացան, որ պիտի փոխեն վերաբերմունքը իրենց հաշմանդամ դասընկերների նկատմամբ.չէ՞ որ կյանքը նման է բումերանգի. նույն հաջողությամբ մեկ օր էլ դու կարող ես հայտնվել հաշմանդամի սայլակին…

Եվ վերջապես, պատմվածքի գլխավոր ուղերձը՝ լինել մարդասեր, պատասխանատու լինել սեփական խղճի առջև, պահպանել մարդկային դեմքը, ինչ իրավիճակում էլ որ լինես:<< Ո՛չ>> ասել աշխարհակործան և հոգիներ խաթարող պատերազմին: Այսպիսով , կատարված դիտարկումները ապացուցեցին, որ խաչվող հասկացություն-ները նպաստեցին երկի համակողմանի վերլուծությանը,իսկ աշակերտների մոտ ձևավորեցին վերլուծական և ստեղծագործական կարողություններ :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ա. Նիկողոսյան, Ա.Վարդանյան, Գրականություն-7, Անտարես, Երևան-2023:
2.Ա. Արզումանյան, Արվեստ. Գրականություն, Հայոց լեզու և գրականություն, 2004, թիվ 1-2:
3.Վ. Վ. Սահակյան,Ռ. Ժ. Ներսիսյան, Հայ դասականների մտքի գանձարանից,<<ՎՄՎ-Պրինտ>> հրատարակչություն, Երևան-2005:

4. Լ. Մարգարյան,Հայ դասական գրողներ. Դ. Դեմիրճյան, Տաթև գիտակրթական համալիր, <<Զանգակ-97>> հրատարակչություն:

5. Ն. Վիրաբյան, Լ. Մարգարյան, Հետաքրքրաշարժ զրույցներ գրականությունից, Հայոց լեզվի ուսուցման մի քանի մեթոդներ, <<Մակմիլան-Արմենիա>> հրատարակչություն:
6. Վիքիպեդիա:

7. ԿԶՆԱԿ, Խաչվող հասկացություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ /1-ին/

Դասարան- 7-րդ

Առարկա- Գրականություն

Թեմա-Դ. Դեմիրճյան, <<Ավելորդը>> պատմվածքի ուսուցումը

Դասի տիպը- նոր նյութի հաղորդում

Նպատակը-Զնավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողություն: Նպաստել հասկացածը սեփական խոսքով վերարտադրելուն:

Վերջնարդյունքները- 1. Աշակերտը կկարողանա արտահայտիչ ընթերցել:

2. Կբացահայտի տեքստի գլխավոր գաղափարը, հերոսների վարքագիծը:

3.Կհայտնի ինքնուրույն տեսակետ դեպքերի և հերոսների վարքագծի վերաբերյալ:

Օգտագործված նյութեր և մեթոդներ- 7-րդ դասարանի դասագիրք, Սալվադոր Դալիի<<Մենություն>> նկարի վերատպությունը, 5-րոպեանոց շարադրանք, ուղղորդված ընթերցանություն:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Խթանում-Ս. Դալիի<<Մենություն>> նկարի ցուցադրում:

Խթանիչ հարց. <<Ի՞նչ կապ կա նկարի և պատմվածքի վերնագրի միջև>>: Մտքերն արտահայտել 5-րոպեանոց շարադրանքով:

Իմաստի ընկալում- <<Ի՞նչ է պատմվածքը>> թեմայով համառոտ զրույց:

<<Ուղղորդված ընթերցանություն>> մեթոդով ընթերցել պատմվածքը, ծանոթանալ դիպաշարին՝ընթացքում անելով կանխագուշակումներ և պատասխանել հարցերին:

1. Ի՞նչ տրամադրություն է հաղորդում պատմվածքի առաջին նախադասությունը:

2. Պատմվածքը կարդալու ընթացքում առանձնացրո՛ւ կերպարները և բնութագրի՛ր նրանց:
3. Ըստ քեզ՝ ո՞րն է Հաճի աղայի անհանգստության հիմնական պատճառն այս հատվածում: Ուշադի՛ր եղիր՝ արդյոք հետագայում կփոխվի՞ այդ պատճառը:
4. Սրբունն ուզո՞ւմ էր հեռանալ քաղաքից: Ի՞նչ ես կարծում, նա ճի՞շտ վարվեց:

Կշռադատում-Պատմվածքը բաժանել մասերի և վերնագրել /<<Փախուստ>> և Զղջում>>/:

Առաջին հատվածի վերաբերյալ միասնական ուժերով կազմել դիպաշարի պլանը:

Անդրադարձ նկարին- Ո՞ր հերոսն էր միայնակ և նման նկարի հերոսին :

Գնահատում- Ձևավորող՝ըստ Բլումի տաքսոնոմիայի:

Տանը- Կազմ ի՛ր Հաճի աղայի ընտանիքի տոհմածառը:Ըստ կազմած պլանի՝ գրի՛ր փոխադրություն<<Փախուստ>> վերնագրով:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ / 2-րդ /

Դասարանը-7-րդ

Առարկան- Գրականություն

Թեման- Դ. Դեմիրճյանի<<Ավելորդը>> պատմվածքի գլխավոր կերպարները

Նպատակը- Ձևավորել ընթերցածը հասկանալու, վերարտադրելու, սեփական կարծիք կազմելու կարողություն:

Վերջնարդյունքներ-Կբացահայտի պատմվածքի հիմնական գաղափարը: Կբացատրի հերոսների վարքագիծը՝հայտնելով ինքնուրույն տեսակետ: Կկարողանա կազմել գրավոր և բանավոր խոսք :

Օգտագործված նյութեր և մեթոդներ-7-րդ դասարանի գրականության դասագիրք, թղթեր, մարկերներ, Մտագրոհ, <<Ֆրայերի մոդել>> մեթոդը, T-աձև աղյուսակ, բանավեճ կամ դատավարություն:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Մկիզբ-Տնային աշխատանքի ստուգում:

Մտագրոհ<<Գրական կերպար>> բառակապակցությամբ:

Դասարանը բաժանել 4 խմբի և ներկայացնել պատմվածքի գլխավոր հերոսներին:

Հիմնամաս- <<Ֆրայերի մոդել>> մեթոդով ներկայացնել օրինաչափությունները պատմվածքում,որի օգնությամբ կպարզվի գլխավոր հերոսի անհանգստությունը, վախը, հոգու խռովքը. փոփոխության ընթացքը: Բոլոր խմբերը կկատարեն նույն առաջադրանքը: Հացկացությունը և սահմանումը նույնն են, տարբեր են միայն օրինակը, հակաօրինակը և նկարը:Ներկայացնելուց և քննարկելուց հետո Т –աձև աղյուսակով համեմատում են Սրբունին և Հաճի աղային:

Ապա դասարանը բաժանվում է երկու խմբի և դատում Հաճի աղային:

Ավարտ- <<Ի՞նչ վերաբերմունք ուներ Դեմիրճյանը Հաճի աղայի և Սրբունի նկատմամբ>> հարցին պատասխանելու համար դուրս բերել տարբեր հատվածներից,թե ի՛նչ կենդանիների հետ է համեմատում Հաճի աղային:Իբրև ամփոփում՝ կարդալ Դեմիրճյանի գրառումը պատմվածքի հերոսների մասին:

Անդրադարձ- համամի՞տ եք արդյոք գրողի հետ:

Կատարել ձևավորող գնահատում:

Տանը- պատմել և նկարագարդել պատմվածքը,պատմական ակնարկ:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ / 3-րդ /

ԴԱՍԱՐԱՆԸ՝ 7-րդ

ԱՌԱՐԿԱՆ՝ գրականություն

ԹԵՄԱՆ՝ Պատմվածքի գաղափարը և ոճը

ՆՊԱՏԱԿԸ՝ ձևավորել պատմվածքի հիմնական գաղափարը ընկալելու և լսարանի առջև ելույթ ունենալու կարողություն:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ՝աշակերտը կկարողանա սեփական կարծիք կազմել, ելույթ ունենալ և հիմնավորել սեփական կարծիքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ՝դասգիրք, թղթեր, մատիտներ, քարտեզ:

Մեթոդները՝Տ-աձև աղյուսակ, <<Շրջագայություն պատկերասրահում>>, <<Ապագայի անիվ>>:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Ցույց տալ մի կարմիր խնձոր և հարցնել ,թե այն ի՛նչ կապ կարող է ունենալ պատմվածքի հետ. չէ՞ որ Արդահանը հայտնի էր իր խնձորենիների այգիներով:Այնուհետև պատմական ակնարկի ներկայացում:Քարտեզի վրա ցույց տալ Դեմիրճյանի նախնիների ծննդավայրը՝Կարինը: Բացատրել, որ հենց այդ բարբառով են խոսում պատմվածքի հերոսները:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Հանձնարարել խմբերին կատարել ընտրովի ընթերցանություն. դուրս բերել կարմիրով գրված տողերը և ցույց տալ Հաճի աղայի հոգեկերտվածքի և վարքագծի փոփոխությունը: Հարցադրումների միջոցով պարզել պատճառները և դրանից բխող հետևանքները :Ներկայացնել պատմությունը մեկ Հաճի աղայի, մեկ էլ Սրբունի անունից:

Կշռադատում:Շրջել պատկերասրահում և <<Ապագայի անիվ>> մեթոդով ներկայացնել պատմվածքի պատճառահետևանքային կապերը՝ ելակետ ընտրելով<<Եթե պատերազմը չլիներ…>> արտահայտությունը :

Կատարել ձևավորող և միավորային գնահատում:

Տանը՝ գրել<<Խիղճը>> վերնագրով շարադրություն :

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ / 4-րդ /

ԴԱՍԱՐԱՆԸ ՝ VII

ԱՌԱՐԿԱՆ՝գրականություն

ԹԵՄԱՆ՝Դ. Դեմիրճյան,Ավելորդը

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ամփոփիչ

ՆՊԱՏԱԿԸ՝ամփոփել ձևավորած գիտելիքները, նպաստել հասկացածը սեփական խոսքով վերարտադրելուն, գործնականում կիրառելուն:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ կկարողանան սեփական կարծիք հայտնել, բացատրել հերոսների վարքագիծը, պատմվածքին նոր ավարտ հորինել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ ՝դասագիրք, թղթեր, մատիտներ:

ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ Է. Դը Բոնոյի<<Վեց գլխարկներ>> մեթոդը:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ՄԿԻԶԲ – Տնային աշխատանքի ստուգում:

Դասարանը բաժանել 6 խմբի՝ըստ 6 գլխարկների գույների և հանձնարարել առաջադրանքներ:

Սպիտակ՝ ներկայացնել պատմվածքի հիմնական գործողությունները:

Կարմիր՝ ներկայացնել պատմվածքում առկա հույզերը, զգացմունքները,տրամադրությունները՝ համապատասխան մեջբերումներով:

Դեղին՝ներկայացնել պատմվածքի դրական, ուրախ կողմերը:

Սև՝ ներկայացնել պատմվածքում առկա վտանգները, բացասական երևույթները:

Կանաչ՝ պատմվածքի համար նոր վերջաբան հորինել:

Կապույտ՝ ներկայացնել պատմվածքում շոշափված խնդիրները, հարցերը, բուն գաղափարը:

ՀԻՄՆԱՄԱՍ-Գործնական աշխատանք , ներկայացում և քննարկում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ- Ընթերցել Ավ. Իսահակյանի խոսքը<<Ավելորդը>> պատմվածքի մասին:

Հարց.<< Համաձա՞յն ես Ավ. Իսահակյանի կարծիքին: Հիմնավորի՛ր տեսակետդ>>:

Գնահատում՝ ձևավորող /փոխադարձ / և միավորային:

Տանը՝ Ա. մակարդակ. 3-4 նախադասությամբ բնութագրել Սրբունին կամ Հաճի աղային:

Բ. մակարդակ.գրել մենախոսություն Սրբունի կամ Հաճի աղայի անունից:

Գ .մակարդակ. պատկերացրո՛ւ, որ դու մարդու իրավունքների պաշտպան ես: Տեղեկություններ հավաքի՛ր Հայաստանում հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների մասին: Արդյոք նրանց իրավունքները պաշտպանվա՞ծ են: Ի՞նչ առաջարկներ ունես:

ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

hh	Աշակերտի անուն-ազգանունը	Գնահատականներ									
		10	9	8	7	6	5	4	3	2	1
1.	Աբրահամյան Գոհար Արթուրի		+								
2.	Ալոյան Արփինե Սամսոնի							+			
3.	Անդիկյան Արմինա Յուրայի			+							
4.	Բաբաջանյան Սոնա Իշխանի						+				
5.	Բոյաջյան Անժելա Զորիկի						+				
6.	Դանիելյան Վարդուհի Արամի						+				
7.	Զաքարյան Հայկ Գուրգենի			+							
8.	Թովմասյան Նորիկ Կարենի							+			
9.	Խուդոյան Հրանտ Սերյոժայի						+				
10.	Կարապետյան Աննա Սամվելի					+					
11.	Կուզմանովա Վալենտինա Ռուստամի		+								
12.	Հարությունյան Աստղիկ Յուրիկի				+						
13.	Հարությունյան Արտակ Ռազմիկի					+					
14.	Հարությունյան Էդվարդ Սամվելի						+				
15.	Ղազարյան Ռազմիկ Վարդանի				+						
16.	Ղազարյան Ռուզաննա Ռազմիկի				+						
17.	Մանուկյան Ժուլվեռն Բաբկենի			+							
18.	Մելիքյան Մարիետա Արամի							+			
19.	Մելիքյան Վարազդատ Տիգրանի			+							
20.	Միքայելյան Արևիկ Հարությունի		+								
21.	Ներսիսյան Արսեն Ֆելիքսի							+			
22.	Շիրինյան Մերուժան Արմենի			+							
23.	Սահակյան Նորայր Նաիրիի					+					

24.	Սամսոնյան Թինա Ռաֆիկի					+					
25.	Սարգսյան Էլեն Արտաշեսի			+							
26.	Սարգսյան Սերոբ Արամի		+								
27.	Ստեփանյան Աննա Վասակի				+						
28.	Օզմանյան Անգելինա Ուսիկի						+				



4 դասերի ընթացքում աշակերտների ակտիվության աստիճանը տոկոսներով:

ԴԱՍ	Պասիվ աշակերտների քանակը	Տոկոսը	Ակտիվ աշակերտների քանակը	Տոկոսը
I	12	43 %	16	57%
II	10	36%	18	64%
III	7	25%	21	75%
IV	5	18%	23	82%


100%
90%
80%
70%
60%
50%
40%
30%
20%
10%
0%
Դաս I
Դաս II
Դաս III
Դաս IV
Ակտիվ աշակերտների քանակը
Պասիվ աշակերտների քանակը

Դասարան և հեղինակ


«Դրամների մոդելը» մեթոդը
Օրինակներ
Հանձնարարություններ
2. Դալվարի փողերը ցեղերորվել էին
երկու տեսակ. մեկ 10 դրամի առաջ.
երբ մեհեանում էր 40 դրամ եղել
ամբաց դրեց մեկ էլ այդ օրը
եղբայրը էր բերել հարյուրամ-
2. Սարդ չիմացավ: սարը:
3. Ոսկիները չարդեց դրանք մ
ունել իր:
4. Հայտնի բան է, որ մարդ
գրպանները կորցնելու էր ան

Ինվնպորդը
Դանի ազգ
Արբան